ԿԱՐԾԻՔ

ՍԵԴԱ ՏԻԳՐԱՆԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ 13-14-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԻԲՆ ԹԱՅՄԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ)» ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(մասնագիտություն՝ Է.00.02 «Համաշխարհային պատմություն»)

Հրապարակային պաշտպանության ներկայացված երիտասարդ հետազոտող Սեդա Տիգրանյանի ատենախոսությունը նվիրված է արաբա-իսլամական միջնադարի կարկառուն գործիչ, աստվածաբան, իրավագետ, սուննի իսլամի պահպանողական «Հանբալի» դպրոցի վառ ներկայացուցիչ, տեսաբան Շեյխ-ուլ-Իսլամ Թակի ադ-Դին Իբն Թայմիային (1263-1328թթ.), որն ապրեց ու ստեղծագործեց մոնղոլների ավերիչ արշավանքներից հետո Միջին Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական փոթորկալից մի ժամանակաշրջանում, ինչը խորապես ազդեց նրա անձի՝ կրոնական գործչի ձևավորման, աշխարհընկալումների և աշխարհահայացքի վրա:

Իսլամի պաշտպանության դիրքերում կանգնած Իբն Թայմիան, ծնվելով առաջատար աստվածաբանների և իրավագետների ընտանիքում, թողել է հսկայական ժառանգություն՝ Ղուրանի մեկնաբանության, աստվածաբանության, հադիսների, իրավագիտության և մի շարք այլ ոլորտների վերաբերյալ: Նա միջնադարի այն եզակի գործիչներից էր, որը թե՛ կենդանության օրոք, և թե՛ հետագա դարերում արաբա-իսլամական հասարակության տարբեր խավերի և մտավորական շրջանակների կողմից արժանացավ թե՛ դրվատանքի, և թե՛ պարսավանքի ու սուր քննադատության:

Իբն Թայմիայի կրոնական, սոցիալական և քաղաքական դիրքորոշումները շատ հաճախ անընդունելի էին ժամանակակիցների և աստվածաբանների համար, ինչի հետևանքով նա ունեցավ բազմաթիվ հակառակորդներ և քննադատներ ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում, այլև՝ հետագա դարերի գիտնականների ու իրավագետների շրջանում: Պատահական չէ, որ իր հայացքների և գործողությունների համար 1299 թվականից նա բազմիցս բանտարկության է ենթարկվել, 1328թ. իր մահկանացուն կնքելով Դամասկոսի բերդում:

Ինչպես հայտնի է, 1258թ. իր մայրամուտն ապրող Աբբասյան խալիֆայության կործանումը մեծ հարված էր սուննիական աշխարհին, որը հայտնվել էր մոնղոլների և խաչակիրների ճիրաններում: Մշակությանին, սոցիալ-քաղաքական հակամարտությունը մոլեգնում էր ողջ տարածաշրջանում, հասարակությունները խեղդվում էին թե՛ տարածաշրջանային ռազմաքաղաքական, և թե՛ էթնիկ հակասությունների մեջ: Եվ ահա, Իբն Թայմիան կարողացավ դիմադրել այդ փոփոխություններին՝ քանդելով իրավագիտության և աստվածաբանական մտքի ու սկզբունքների միջև խոչընդոտները: Նա կտրուկ վերանայեց, իր կարծիքով, գերիշխող աստվածաբանական դոգմաները և տեսակետները, ինչի պատճառով նրա կրոնափիլիսոփայական և կրոնաիրավական հայացքները միանշանակ չընդունվեցին հասարակության կողմից: Ավելին, Իբն Թայմիայի հակասական կերպարի և գաղափարախոսության շուրջ բանավեճերը չդադարեցին հետագա դարերի ընթացքում, որոնք ցարդ շարունակվում են, հատկապես այն բանից հետո, երբ մեր օրերում ջիհադիստական որոշ խմբավորումներ դիմում են նրա գաղափարներին ու ֆեթվաներին՝ իրենց գործողություններն արդարացնելու համար:

Այսպիսով, 13-14-րդ դարերի սոցիալ-քաղաքական, մշակութային, դավանաբանական իրարամերժ խնդիրների լուսաբանումն Իբն Թայմիայի խրթին նյութերով չափազանց շնորհակալ աշխատանք է, որն իրականացնելու ուղղությամբ համարձակ քայլ է կատարել երիտասարդ հետազոտող Սեդա Տիգրանյանը: Ատենախոսությունը աչքի է ընկնում իր կուռ շարադրանքով, խնդիրների վերհանման և լուսաբանման տրամաբանությամբ: Արաբալեզու սկզբնաղբյուրների, մանավանդ Իբն Թայմիայի աշխատությունների մանրակրկիտ հետազոտումը և հրապարակի վրա եղած բազմալեզու գիտական հարուստ գրականության օգտագործումը հեղինակին հնարավորություն են տվել քննական վերատեսության ենթարկել իրար հետ փոխկապակցված գիտական մի խումբ հարցեր, որոնք առաջին անգամ են ուսումնասիրվում հայ արևելագիտության կողմից: Արաբալեզու սկզբնաղբյուրների բարդ նյութերի համեմատական վերլուծության շնորհիվ Սեդա Տիգրանյանին հաջողվել է պատմական և ռազմաքաղաքական զարգացումների ֆոնին հիմնավոր կերպով լուսաբանել 13-14-րդ դարերի իսլամական պետության և հասարակության աշխարհաքաղաքական կերպափոխումներն ու զարգացման դինամիկան:

Խնդրո առարկա թեման խիստ այժմեական է, որի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում վերհանել և խորքայնորեն ներկայացնել տվյալ ժամանակահատվածում իսլամական հասարակության ներսում տեղի ունեցող պատմական, քաղաքական և մշակութային գործընթացները: Թեման խիստ կարևոր է նաև իսլամական կրոնաքաղաքական տարբեր ուղղությունների վրա Իբն Թայմիայի գաղափարների ազդեցությունը պարզաբանելու և դրանց գործնական կիրառությունները բացահայտելու անհրաժեշտության տեսանկյունից:

Ատենախոսությունը պարունակում է նոր շեշտադրումներ՝ լույս սփռելով 13-14-րդ դարերի պատմական, քաղաքական, սոցիալական, մշակութային-գաղափարական իրողությունների վրա, ինչպես նաև հնարավորություն է տալիս բացատրելու իսլամական հասարակության զարգացման հետագա ընթացքին առնչվող իրողությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից (178 էջ):

Առաջին գլխում ատենախոսը անդրադարձ է կատարում իսլամական աշխարհում տեղի ունեցած պատմական փոփոխություններին, որոնք նոր իրավիճակ են ստեղծում տարածաշրջանում՝ կազմելով Իբն Թայմիայի հայացքների ձևավորման պատմական համատեքստը: Նույն գլխում համակողմանիորեն ներկայացվում է Իբն Թայմիայի գործունեությունը, անձամբ մասնակցությունը մոնղոլական արշավանքներին, մամլուքյան իշխանությունների հետ հարաբերությունները, վերլուծվում են ժամանակի պատմական իրադրության համատեքստում շարիաթով մոնղոլների դեմ ռազմական պայքարի անհրաժեշտությունը հիմնավորելու ուղիները:

Երկրորդ գլխում Ս.Տիգրանյանը ներկայացնում է այն հիմնական գործոնները, նորարարությունները, որոնք, ըստ ֆակիհի, հանգեցրել են Ումմայի պառակտմանը և իսլամական աշխարհում տիրող ճգնաժամին: Ապա՝ պատմական համատեքստում պարզաբանում է կարևոր որոշ դրույթների վերաբերյալ տարակարծությունները, քննադատությունների խորքային պատճառները: Նույն գլխում անդրադարձ է կատարում նաև շարունակվող կրոնական վեճերին՝ իսլամ և քրիստոնյա կրոնական գործիչների դիսկուրսին, բանավեճերին և այլն:

Ատենախոսության երրորդ գլխում ատենախոսը վերլուծում է Աբբասյան խալիֆայության փլուզումից հետո իսլամական համայնքը Ումման քայքայված վիճակից հանելու, հասարակությունը սոցիալապես և քաղաքականապես կազմակերպելու սկզբունքները, որոնք կազմում են Իբն Թայմիայի գործունեության հիմնական ծրագիրը:

Աղբյուրագիտական լայն հենքի վրա հեղինակը հետազոտում և համապարփակ ձևով ներկայացնում է տարընկալումների առարկա դարձած մի շարք կարևոր դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն ինչպես ուսումնասիրվող ժամանակաշրջանի, այնպես էլ իսլամական հասարակության զարգացման հետագա ընթացքին առնչվող իրողությունները պարզաբանելու տեսանկյունից:

Իսլամական արմատականության ներկայիս իրողությունները խորապես ընկալելու առումով արժեքավոր է այն, որ ատենախոսության շրջանակում որոշակի դրույթներ քննելիս ատենախոսը զուգահեռաբար համեմատական վերլուծությամբ անդրադարձ է կատարել նոր և նորագույն շրջանում դրանց կիրարկումներին: Այդ պարագան նոր դիտանկյուն է առաջացնում իսլամական մտքի զարգացման հետագա շրջանում Իբն Թայմիայի հայացքների տեղն ու դերը հետազոտելու առումով:

Եվ այսպես, Սեդա Տիգրանյանին հաջողվել է խնդրո առարկա թեմայի համակողմանի ուսումնասիրությամբ լույս սփռել նրա շատ ասպեկտների վրա, փաստերի համադրման, քննական և համապարփակ վերլուծության շնորհիվ վերհանել իսլամական միջնադարի կրոնական, հասարակական-քաղաքական կյանքի փոփոխությունները: Իբն Թայմիայի աշխատությունների նյութերի դասակարգման, մանրազնին ուսումնասիրության, վերծանման և լուսաբանման միջոցով ատենախոսին հաջողվել է շարադրել ինքնատիպ և գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող ուշագրավ մի հետազոտություն:

Այդուհանդերձ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ Սեդա Տիգրանյանի ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից՝

1. Նախ, ատենախոսությունը հրատարակության պատրաստելու համար կառաջարկեինք հետևյալ խորագիրը՝ «Իսլամական պետության և հասարակության զարգացման աշխարհաքաղաքական կերպափոխումները 13-14-րդ դարերում ըստ Իբն Թայմիայի»:

2. Աշխատությունում, կարծում ենք, անհրաժեշտ է ավելի մեծ տեղ տալ Իբն Թույմիայի կյանքին ու գործունեությանը, թողած մեծ ժառանգությանը, գնահատելով նրան՝ որպես քաղաքակրթական նոր արժեհամակարգի վառ ներկայացուցիչ, որն իր գործունեությամբ փորձ կատարեց ազդելու ժամանակի հասարակական, կրոնա-քաղաքական, իրավական և այլ գործընթացների վրա:
3. Կարծում ենք Իբն Թայմիայի օգտագործած աշխատությունների խորագրերը և մեկնաբանությունները վերանայման և հայերեն ճշգրիտ թարգմանության կարիք ունեն (էջ 9-12): Օրինակ, «الصارم المسلول على شاتم الرسول» խորագրի թարգմանությունը պետք է լինի «Մարգարեին հայհոյողին՝ քաշված կտրիչ թուր», ոչ թե «Մերկացած սուր՝ առաքյալին վիրավորողի դեմ» (էջ 11): Մեկ այլ աշխատության խորագիրը «الجواب الصحيح لمن بدل دين المسيح» պետք է թարգմանվի «Ճշմարիտ պատասխան Քրիստոսի կրոնը փոխողներին», ոչ թե «Ճշմարիտ պատասխան նրանց, ովքեր փոխել են Մեսիայի կրոնը» (էջ 11), «الفريضة الغائبة» «Բացակայող պարտավորություն», ոչ թե «բացթողած պարտականություն» (էջ 50) և այսպես շարունակ:
4. Ատենախոսին խորհուրդ կտայինք տերմինների մեկնաբանությունները, բացատրությունները կատարել պատմական իրողությունների և իմաստային փոփոխությունների համատեքստում: Այդ նպատակով հարկ է օգտագործել միջնադարի արաբ հայտնի լեզվաբանների՝ Իբն Մանզուրի «Լիսան ալ-արաբ», Ֆիրուզաբադի «Կամուս ալ-մոհիտ», Մուհիբ ադ-Դին ալ-Զուբայդիի «Թաջ ալ-արուս» և այլոց բացատրական բառարանները:
5. Աշխատությունում տեղ գտած որոշ տերմինների իմաստները հարկավոր է դիտարկել լեզվամտածողության փոփոխությունների և զարգացումների տեսանկյունից: Դրանցից օրինակ ՝ «منافق» (էջ 88), «جهاد النفس» (էջ 100) և այլն:
6. Հեղինակը հաճախ Մոհամմադ մարգարեից հետո իշխող «արդարադատ, արդարամիտ, բարեպաշտ» չորս խալիֆաներին կոչում է «արդարակյաց» (տես՝ էջ 50-122, 156):
7. «Շիայականություն» պետք է լինի »շիականություն» (էջ 19, 24, 33...)
8. Աշխատությունը մեծապես կշահի, եթե հեղինակը կազմի տերմինների, բառերի և բառակապակցությունների բառարան:

Այս և այլ կարգի դիտողությունները բնավ ստվեր են գցում Սեդա Տիգրանյանի գիտական արժեքավոր ատենախեսության վրա: Ընդհանուր առմամբ, աշխատությունը հաջողված գործ է, ունի գիտական և կիրառական մեծ նշանակություն: Հեղինակի եզրակացությունները հիմնավոր են և համոզիչ: Նրա հրատարակած սեղմնագիրն ու գիտական հոդվածները արտացոլում են թեմայի բովանդակությունը:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում եմ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդին՝ Սեդա Տիգրանյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա լիովին արժանի է:

01/07/2026

Արշակ Փոլադյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Թունիսի Հանրապետությունում
և Մարոկկոյի Թագավորությունում ՀՀ դեսպան

Հաստատում ենք՝
դեսպան Ա. Փոլադյանի ստորագրությունը

Թունիսում ՀՀ դեսպանություն